«ԵՐԵԽԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ՔԱՌՕՐՅԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՇԱՐՔ

06.08.2020 18:24

ՀՀ փաստաբանների պալատը Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ/UNICEF) հետ համատեղ իրականացնում է «Հայաստանում երեխաների բարենպաստ իրավաբանական օգնության բարձրացում» ծրագիրը, որի շրջանակներում փաստաբանների համար **2020 թվականի օգոստոսի 10-ից 13-ը** կազմակերպվում է **վերապատրաստման քառօրյա դասընթացների շարք՝ «Երեխայի մասնակցությամբ դատավարության իրավական և հոգեբանական առանձնահատկությունները»** թեմայով:

Դասընթացը բաղկացած է երկու մասից՝ երեխայի մասնակցությամբ դատավարության առանձնահատկությունների վերաբերյալ իրավական և հոգեբանական թեմաներից (բաժիններից): Դասընթացի նպատակն է՝

- փաստաբաններին լիարժեք գիտելիքներ և պատկերացումներ հաղորդել երեխայի իրավունքների այն միջազգային և ազգային չափանիշների վերաբերյալ, որոնք պետք է պահպանվեն երեխաների մասնակցությամբ իրականացվող դատավարության ընթացքում (**դասընթացի իրավական մաս**).

- փաստաբաններին համակարգված գիտելիքներ և հմտություններ հաղորդել երեխաների մասնակցությամբ իրականացվող դատավարության ընթացքում երեխայի հետ ճիշտ հաղորդակցվելու և երեխային չվնասելու համար (**դասընթացի հոգեբանական մաս**).

Դասընթացի ավարտին մասնակիցները կանցնեն թեստային համառոտ ստուգում, որը հաջողությամբ հանձնելու դեպքում կստանան հավաստագիր՝ հաստատված ՀՀ փաստաբանների պալատի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից: Դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի նաև 8 (ութ) ակադեմիական ժամ վերապատրաստում:

Դասընթացին կարող են մասնակցել **նախապես գրանցված 30 (երեսուն) փաստաբան:** Նախապատվությունը կտրվի դասընթացին ավելի վաղ գրանցված փաստաբաններին: Դասընթացին գրանցվելու համար անհրաժեշտ է **մինչև 10.08.2020թ. (երկուշաբթի) ժամը 15:00-ն** պատասխան նամակ ուղարկել **ani.gharibyan@advocates.am էլ. հասցեին՝** նշելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի համարը և դասընթացի անվանումը:

Խնդրում ենք դասընթացին գրանցվել, եթե համոզված եք, որ կարող եք դրան մասնակցել ամբողջ ժավալով՝ բոլոր 4 օրերին:

Դասընթացն անցկացվելու է հեռավար կարգով: Դասընթացին գրանցված փաստաբաններն էլեկտրոնային փոստով կստանան հրավեր (հղում), որն ակտիվացնելով կմիանան դասընթացի հարթակին:

Բեռնել դասացուցակը

Առաջարկվող նորություններ

14.08.2020
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })